

ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ

Քանասիրական գիտությունների թեկնածու

**ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆ. ՀԱՅՈՒԹՅԱՆ ՈԳՈՒ ԵՎ
ԿԵՑՈՒԹՅԱՆ ՍՐԲԱԳՈՐԾՈՒՄԻ ՀԱՎԱՏԱՎՈՐ ՀԱՅՐԸ
(Դիտարկումներ Խրիմյան Հայրիկի ազգային գործունեության և
ստեղծագործության կենսափիլիսոփայության շուրջ)**

Մահվան 100-ամյակի առթիվ

*Այն ազգն և աշխարհ, որ Հայ չէ, մեզ հետ չի
լար, այլ մեզ պէտք չի օտարին լաց, բաւական
է, որ թէ տարաշխարհիկ գաղթական հայեր յի-
շեն մեր հայրենեաց չարչարեալ որդիքներ և
լան. և գիտեմ, որ դու գիտես, թէ սոսկ լալով ու
ողբով եթէ շաղախենք մեր հայրենեաց հող՝
հայրենիք չշինուիր... Օր մի ևս Երկինք այդ
կենդանարար ցոյ Հայոց դաշտերուն վերայ
ցողէ, դու կը տեսնես, թէ ինչպէս Հայոց աշ-
խարհն ևս կը վերածնի հրաշիւք: Միայն թէ մենք
աննկուն արիութեամբ գործենք և Աստուած
մեզ օգնական է...*

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆ

*Եւ նրա ազնիւ ճգանց փոխարէն
Տգէտը փշեայ պսակ է հիւսում,
Իսկ նա լի յոյսով իւր սերմն է ցանում,
Եւ ապագայում հունձքի սպասում...*

ՐԱՖՖԻ

Խրիմյան Հայրիկի (1820-1907), որպէս լիարյուն և լիակորով ապրած ՀԱՅԻ, հա-
յությանն իր ուսուցանելի կյանքը նվիրաբերած հոգևոր աննկուն գործչի առաքե-
լությունը, ժամանակային առումով համընկնում է հայ ժողովրդին պատուհասած
այնպիսի պատմական անագործուն ժամանակաշրջանի հետ, երբ նրա պէս ինք-
նագոհ գործչի առաջնորդության անհրաժեշտությունը զգալի էր. «Աղեաց խորերէն
կը սիրէ նա Հայն» (Պ. Դուրյան):

Կրօնական, հասարակական-քաղաքական անգուցական գործիչ ու բնաշխար-
հիկ գրող, մտածող ու ազգային բարոյախոս Մկրտիչ Խրիմյանի ունեցած անուրա-
նալի վաստակը առ հայ ժողովուրդը, անցյալ դարի երկրորդ կեսերից մինչև 20-րդ
դարասկիզբ, հայության փոթորկաբեր կյանքի այն ժամանակաշրջանն էր ընդգր-

կում, երբ «գաղափարի ու ազատության ջահակիրը» (Միամանթո) կարևորում էր «ժողովուրդին միտքը դեպ յառաջադիմություն» և խորապես գիտակցում էր ժամանակաշրջանի հարուցած դժվարությունները և հայության անպատկերելի պայմանները. «Մեր աշխարհին մեջ լացն ևս ազատութիւն չունի» ինքնահամոզմամբ:

Դեռևս 1855 թ. Մ. Խրիմյանը Կ. Պոլսում հրատարակում է «Արծվի Վասպուրական» հանդեսը, իսկ երեք տարի անց այն փոխադրում Վարագ: Այսպիսով նա իր շուրջ համախմբելով հիմնականում ժառանգավորաց դպրոցի սաներին, կարողանում է նրանց մեջ բորբոք պահել ազգի պայքարի, լուսավորության տարածման հրամայականը: Մինչ Տարոնի առաջնորդ նշանակվելը (1862 թ.) Մ. Խրիմյանը շարունակում է իր եռանդուն գործունեությունը՝ Կովկաս և այլուր այցելելով, ժառանգավորացի և հանդեսի համար հանգանակություններ կազմակերպելով. նպատակը ազգօգուտ գործունեությամբ հայության մեջ խավարամտության դեմ պայքարն էր՝ ինքը լինելով այդ պայքարի առաջնորդության խորհրդանիշն ու աննկուն հավատավորը:

Օրե օր Մ. Խրիմյանի համբավը, ազգային կյանքում բարեփոխումների անհագուրդ ծարավի գործչի նվիրյալությունը, հանգեցնում է նրա՝ Կ. Պոլսի հայոց Պատրիարք ընտրվելուն (1869 թ.): Հինգ տարի անց նա հրաժարվեց պատրիարքությունից՝ գիտակցելով, որ չնայած ինքը ունակ է այնպիսի բարեփոխումների, որոնք կնպաստեն իր պաշտելի ժողովրդի մեջ կամքի, հաստատականության սերմանմանը, բայց ժամանակներն այնպիսին են, որ ներազգային կյանքում հրահրված ներքին պայքարն ու անհանդուրժողականությունը, այնուամենայնիվ, ավելորդ նյարդեր են ջլատում, ընդհուպ մինչև ամենատարբեր բանսարկությունների միջոցով փորձելով խոչընդոտել իր ծավալած գործունեությանը, այն է՝ հայ մարդուն վերադարձնել իր ներքին ուժը, պայքարի ունակ անկորնչելի հավատը: Ունեցած այդ հավատամքի արգասիք էր Մ. Խրիմյանի անձնամերժ, ժողովրդանվեր գործունեությունը հատկապես այնպիսի օրհասական վիճակներում, երբ ժողովրդին անհրաժեշտ էր իրավ օգնություն, հայրական ամենահոգածու վերաբերմունք: Նրա անմիջական նախաձեռնությամբ ժամանակին (1879 թ.) հիմնվեց Գյուլատնտեսական գիշերօթիկ դպրոց: Այնպիսի աղետալի, օրհասական ժամանակներ էին, երբ Վանա ողջ ժողովուրդը հեծում էր սովամահության ճիրաններում. իր նախանձախնդրության շնորհիվ կազմակերպված օգնությունը որոշապես կանխեց վերահաս աղետը՝ մարդկանց պարգևելով ապրելու և պայքարելու երբեմնի կորած հավատը: Չնայած կյանքն իր անհուսալի ընթացքով շարունակվում էր, Մ. Խրիմյանի հայանվեր պայքարը նույնպես, մինչև այն պահը, երբ նա միաձայն կընտրվեր Ամենայն Հայոց Կաթողիկոս (1892 թ.), գործունեության մի նոր բոլորովին այլ ոլորտ, իր ժողովրդին առավել օգտակար լինելու բոլորովին նոր հեռանկարներ՝ հայրենապաշտ հայորդու համար:

Մկրտիչ Խրիմյանի ապրած ողջ գիտակցական կյանքը եղել է հայրենանվեր պայքար, և այդ պայքարը չէր կարող չվերափմաստավորվեր նրա իսկ ձեռամբ՝ ի պահ թողնելով այնպիսի գրական, իմաստասիրական, բարոյախոսական ժառանգություն, որն իրավամբ այսօր էլ վերաբժեկորելու անհրաժեշտություն ունի: Ամենատարբեր խնդիրներ շոշափող հայրիկյան խտացումները ուղղված են Դրախտի

Երկիր-տեսականին. հայության լուսավորյալ վաղվա օրվան և, ինչու չէ, այսօրվան: Եվ որ անհուն տառապանքների խաչուղիներով անցած ՀԱՅՆ երբևէ մի օր ապրելու է իր արժանավայելությամբ, ինչ որ Աստծո վերին կամեցողությամբ վերուստ է ընծայված բազում ազգերի, հայոց՝ մասնավորաբար:

«Թէ մենիմ երթամ գերեզման և այլ ևս չկարեմ խօսիլ ձեզ հետ կենդանի բարբառով ու գրով. ահա կը թողում ձեզ գիրս իբրև մշտախօս կտակ և յիշատակ, որոյ միակ նպատակն է, որ հայն իւր հայրենատուր հողէն չը բաժնուի, զի իւր սեպհական ժառանգութիւնն է դրախտի երկիր, զոր Տէր Աստուած մեր Ադամ՝ պապուն և ժառանգորդներուն տուաւ և ասաց գործել գերկիր ու պահել»:

Ընդհանրապես, Մ. Խրիմյանի մտածումներում առկա է ժողովրդի միասնացվածության, օտար տերությանց ապավինությանը չվստահելու գաղափարը: Կարելի է միայն հիշել, թե ինչ անհանդուրժն կեցվածքով էր նա պայքարում Հայ Եկեղեցու գույքը վերադարձնելու և դպրոցները վերաբացելու համար: Ի վերջո, ցարական նոր հրամանագրով (1905 թ.) այն էտ վերադարձվեց: «Ավերակ բունը» վերաշինելու և նրա շուրջ «պանդուխտ և տարագիր հայք» համախմբելու հրամայականը Հայրիկը հայ ժողովուրդը կորստից փրկելու միակ ճշմարիտ ճանապարհն էր համարում:

Խրիմյան Հայրիկի գրական ողջ ժառանգությունը («Պապիկ և թռնիկ», «Դրախտի ընտանիք», «Սիրաք և Սամուել», «Հայգոյժ», «Վանգոյժ») ազգային-բարոյախրատական երկասիրություններ լինելուց զատ, նաև ուսուցողական բացառիկ նշանակություն ունեն և հազեցված են ազգային պահպանողական վեհ, այսօր, մերօրյա սերունդների համար կենսական և կենսաշահ, հրամայապահանջ, հոգևոր կենսավիշ պարունակող գաղափարներով: Մեր առ հայրենի բնաշխարհն ու այն ամենը, ինչ բարեպաշտական ակունք ու սկզբնավորում ունի: Բարեպաշտությունը Խրիմյանի համար հայի և հայության կեցության, ոգորումի սկզբնակերպ-ապրելակերպն է, ոչ միայն այն բանի համար, որ հայը քրիստոնեաբար է իր կյանքի «ընկերական և քաղաքավարական» ընթացքը տնօրինում և ըստ այդմ բարիք արարելու կարողությամբ և մեծահոգությամբ մյուս ազգերի մեջ սերմանում իր առաքինության, բարոյականության ընձյուղները, այլև լինելով «մեծ աշխատությամբ» օժտված և բարեսեր, բարեխնամ, լինելության աստվածատուր իր ճանապարհին հավատարիմ՝ դիմագրավում է ամենայն խոչընդոտ ու արգելանք:

Սակայն դիմագրավելու խնդիրը՝ քաջալերությամբ է պայմանավորված ու բոլորանվեր սիրով. «Վերջին անգամ երբ դարձայ Պոլսէն, արդէն միտքս դրած էի, որ առաջին անգամ Արճակու վանից Մ. Աստուածածին տաճարին ուխտ երթամ, մոմ, խունկ, կանթեղին ձեթ պատրաստեցի ու գացի, մտայ Տաճար, գլուխս բացի, սեղանին առաջ ծունկի վերայ եկայ, աղօթք արի, սիրտս փլաւ ու շատ լացի. կանչեցի Տիրամայր Աստուածածին, գործիս յաջողութիւն խնդրեցի, Քրիստոսի խաչի սեղանին առաջ ուխտեցի, որ այլ ևս չըհեռանամ գեղէն, չթողում տուն ու տեղս, արտերս ու դաշտերս»:

Ինչ անսահման գործվանք ու նվիրվածությամբ տրոփող հոգի պետք է ունենալ, որ այսօրինակ անդավաճանությամբ ու ներքին հավատքով, անանձնականությամբ ապրել իրապես անտրտունջ մաքառման ողջ դրամատիզմը՝ բնավ չցուցաբերելով, չդրսևորելով այն օրերի ազգային ողբերգականության ահավորությունն ու, ինչու չէ,

անհուսալիությունը: Խրիմյան Հայրիկի մաքառող ոգին և անկոտրում հավատն առ իր ժողովուրդն ու նրա ապագա բարօրությունը նախ և առաջ իր աստվածատուր և աստվածահաճ ինքնավստահության արդյունք է. աշխարհը,- և նախ և առաջ հայոց աշխարհը,- Աստծո փրկաբեր լույսի ու գործությանն էր կարոտ, և այդ լույսը նվիրական ու նվիրաբերված հոգիների ինքնայրմամբ էր միայն հասանելի և տեսանելի ամենեքայն: Այդ լույսի ակունքը հայրենի հողն էր և,- և է,- տառապած մարդկանց անկոտրում կամքը, որ բնության աստվածային շնչառությամբ և Աստծո բնությամբ «բարութեամբ կը լեցուի». քանի որ «Տէր Աստուած մարդոյն համար ստեղծեր է. և մարդոց տուած է, որ մարդիկ ապրին երկրի վրայ, մարդիկ վայելեն այդ բարիքները և օրհնեն ստեղծողին և տուողին անունը: Ուստի մարդիկ պէտք է գործեն զերկիր, զի երկիրն է իրենց կեանք պահող»:

Երկրի, ասել է թե բնաշխարհի խորհուրդը առավել կենսավետությամբ ու լիարյուն «գուարթութեամբ և կայտառութեամբ» է տրոփում հոգևոր մխիթարությամբ սնվող, կրթությամբ տոգորվող («կրթութեամբ միայն մարդը՝ մարդ կը լինի») հայ մարդկանց կրծքի տակ, հասկապես «քաղաքացւոց», որոնք, երբեմն «ընտանեկան հոգածութենէ յոգնած, դատարկ ու անգործ» բարոյական շեղումներ են թույլ տալիս՝ «թշուառ ու չարաչար կեանք» վարելով: Խրիմյան Հայրիկի համար հոգևոր-աշխարհայացքային նշանակություն ունեն ՀԱՅ ընտանիքի, իբրև սերնդակոչման՝ հայության «անկործանելի, հաստատուն» շարունակումն ապահովող հույժ էական դերակատարումի խնդիրը: «Չքաւորութիւն և պանդխտութիւն մեծապէս խափանարար» են եղել հայ ժողովրդի կյանքում. և միայն այս ամենի խորագոյն գիտակցումը չէ, որ «Դրախտի ընտանիք» երկասիրության մեջ նա ազգային, բարոյական խնդիրներ է շոշափում: Հետամուտ լինելով ճշմարիտ հայ քրիստոնյային և մեծ մտածողին՝ բարոյաբանին ինքնահատուկ հարցադրումներով այնպիսի խնդրահարույց իրողությունների արծարծմանը, որ այսօր, տարիների հեռավորությունից իրենց նպատակայնության ազգաշահ բացահայտումներով և ուղենշումներով, ոչ միայն զարմացնում են, այլև նորովի մտածելու տեղիք տալիս: Այս խորհրդածումների համապատկերի վրա առավելս է գործչի (մեր պատմության մեջ հազվադեպ հանդիպող) նրա կերպարը ամբողջական ու նվիրական դառնում. «Գիտնալ ու հաւատալ պէտք է, որ աշխարհիս ընտանեկան դրախտին մեղապարտ են անհնազանդ զաւակներն՝ երկնից դրախտն կարող չեն ժառանգել: Ուստի այս ընտանեկան կեանքի սեղանին վրայ ես միայն սոսկ հաց չպատրաստեցի, և թէ պատրաստէի ևս՝ Յիսուս հրաման կուտար, ինչպէս տուաւ իւր աշակերտաց, երբ անապատի մէջ ժողովուրդ քաղցած հաց կը խնդրէր՝ ասաց Յիսուս «Դուք տուք դոցա ուտել»: Աստի յայտ է, թէ կենաց բանին հետը մերթ ևս ժողովուրդին հաց մատակարարել. Աւետարանին հակառակ տնտեսութիւն չէ, ժողովուրդ հայոց, քեզ համար նկարեցի Դրախտի ընտանիքը, կ'աղաչեմ, որ իբրև հայելի դնես աչքիդ հանդէպ, հայիս ու տեսնաս հիւանդ ու հիւծեալ կերպարանք: Կարկի բերանս, թէ չարագուշակ լինիմ քեզ համար, մահդ ինքնին կը կոչես ու պիտի մեռնիս, եթէ չվաղվադես դարման տանել այդ համաճարակ ու մաշող մահաբեր ախտիդ, որ թէ կանուխ թէ անագան զքեզ դէպի թշուառութեան գերեզման կը տանի»:

Ընդհանրապես, ազգային բարոյական այն խնդիրները, զարմանալիորեն իրենց

անխամբելի հարցադրումներով, որոնք ներկայացված են «Դրախտի ընտանիք» երկասիրության ազգային հոգեբանություն արտացոլեցնող շերտերում, «հայտնաբերված ճշմարտության» պես բացահայտ է դառնում մեր նախնյաց և մեր վարքում: Փոքր-ինչ փոխակերպելով Պոլ Վալերիի խոսքը (պոեզիայի էությունը նա նույնացնում է Աստծո էության հետ, Ա. Ա.) և խնդրահարույց համարելով բարոյականության շարժուն ընթացքը, ընդհանրապես, հասարակական գիտակցության մեջ՝ ընտանիքի խորապատկերի վրա, կամ ընտանիքը հիմնահիմք ընդունելով, իբրև հասարակության (իմա՝ ազգի) կայացման, զարգացման իրապես ընդունելի եզրահանգման ենք գալիս. «Ես ընդունում եմ Բարոյականության (Պ. Վալերին գրում է՝ Պոեզիայի, Ա. Ա.) էությունը, ինչպիսին էլ այն լինի՝ ըստ զանազան մտածելակերպերի, կամ չունենալով որևէ արժեք, կամ ունենալով անսահման կարևորություն, ինչի շնորհիվ այն նույնանում է հենց Աստծո հետ»:

Այս նկատառումը արժեվոր է այնքանով, որքանով որ պարզորոշ չի սահմանազատվում բարոյականության ընկալման մեկնակերպերը, սկզբունքները: Խրիմյան Հայրիկը «Դրախտի ընտանիք»-ի «Հայոց նահապետական տուն և ընտանիք», «Մարդ և ամուսնություն», «Տուն և ընտանիք», «Ամուսնություն կամ ընտանեկան կյանքին խափանարար զեղծումներ», «Հարսանիք և խորհուրդ պսակին», «Ընտանեկան պատկառանք և ազատություն» խորհրդածումների մղող բաժիններում խորին ներքնատեսության ու զգաստության հորդոր է կարդում, «ճշմարիտ քաղաքակրթության և դեպի հառաջադիմության» սկզբունքներից ելնելով, առ հայությունն ունենալով այնպիսի հավատ, որ «դաստիարակությամբ հոգի և սիրտ» հնարավոր է կրթել լիարժեքորեն. «Բովանդակենք յորդորական ճառը, ով դուք ընտանիք Հայոց, ուղղեցեք Ձեր ներկան, որ ապագան ուղիղ լինի. տնտեսեցեք Ձեր ներկան, որ ապագային հացը չպակսի: Մի մոռնաք վերոյիշեալ երեք պայմանները, որ մեր թշուառ կեանքը կը բարւոքեն և այս է՝ լուսով հաց գտէք, դաստիարակութեամբ բարի ընտանիք կազմեցեք. իսկ իմաստուն տնտեսութեամբ հոգացեք միանգամայն Ձեր ներկան և ապագան»: